

Հավելված

«ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ I»-ի տնօրենների խորհրդի
2016 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 01.12.2016-01 Լ որոշման

**«ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ I»**

**ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Բովանդակություն

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	3
2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ	5
2.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն	5
2.2. Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ	6
2.3. Մասնակցության վկայագրեր	12
2.4. Հասույթ	12
2.5. Ծախսեր	13
2.6. Շահութահարկ	13
2.7. Արտարժությային գործարքներ և փոխարժեքային տարբերություններ	14
3. ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ	15
3.1. Ընդհանուր դրույթներ	15
3.2. Ֆինանսական ծախսեր	15
3.3. Վարկերի և դեբիտորական պարտքերի պահուստավորման և դուրս գրման գծով եկամուտներ և ծախսեր	
3.4. Այլ եկամուտներ և ծախսեր	16
4. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՎԱՐՈՒՄԸ	17

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. «ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ Լ»-ի (այսուհետ՝ Հիմնադրամ) հաշվապահական հաշվառումը վարվում է և ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում են «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին», «Արժեթղթերի շուկայի մասին», «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքներին, Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ-ներ), ՀՀ ԿԲ կողմից ընդունված և այլ հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերին համապատասխան:
- 1.2. Հաշվապահական հաշվառումը Հիմնադրամի ակտիվների և պարտավորությունների վիճակի ու շարժի վերաբերյալ, դրամական արտահայտությամբ, տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգ է՝ տնտեսական գործառնությունների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառման միջոցով:
- 1.3. Հաշվապահական հաշվառման խնդիրն է Հիմնադրամի ֆինանսական վիճակի, գործունեության ֆինանսական արդյունքների, ֆինանսական վիճակում փոփոխությունների վերաբերյալ ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին (ներդրողներին, կրեդիտորներին և այլոց) անկողմնակալ տեղեկատվությամբ ապահովելը, որը նրանց օգտակար է տնտեսական (ներդրումային) որոշումներ կայացնելու համար:
- 1.4. Հաշվապահական հաշվառման վարման հիմնական կանոններն են.
 - ա) հաշվապահական հաշվառումը վարվում է՝
 - 1) Հայաստանի Հանրապետության արժույթով՝ հայկական դրամով.
 - 2) կրկնակի գրանցման եղանակով՝ հաշվապահական հաշվառման աշխատանքային հաշվային պլանին համապատասխան.
 - 3) անընդհատ՝ Հիմնադրամի գրանցման պահից մինչև օրենդրությամբ սահմանված կարգով նրա վերագրանցումը կամ դադարումը (լուծարումը).
 - բ) անալիտիկ հաշվառման և սինթետիկ հաշիվների տվյալները պետք է համապատասխանեն միմյանց.
- 1.5. Հաշվապահական հաշվառումը վարվում է հաշվեգրման մեթոդով, այսինքն՝ գործառնությունները և իրադարձությունները ճանաչվում են դրանց կատարման պահին, և հաշվառման գրանցամատյաններում գրանցվում են դրանց կատարման ժամանակաշրջանում:
- 1.6. Ակտիվները և պարտավորությունները, ինչպես նաև եկամուտները և ծախսերը չեն հաշվանցվում, բացառությամբ համապատասխան ՖՀՄՍ-ներով պահանջվող կամ թույլատրվող դեպքերի:

- 1.7. Հաշվետու ժամանակաշրջան է համարվում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամանակաշրջանը՝ հաշվետու տարին (համընկնում է օրացուցային տարվա հետ), հաշվետու եռամսյակը և հաշվետու ամիսը, իսկ օրենքներով կամ ՀՀ ԿԲ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ նաև շաբաթը կամ օրը:

2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

2.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

- 2.1.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը որոշակի սկզբունքներ, հիմունքներ, եղանակներ, կանոններ, ձևեր և արարողակարգեր են, որոնք կիրառվում են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու և ներկայացնելու նպատակով:
- 2.1.2. Կոնկրետ գործառնության, այլ դեպքի կամ իրադարձության նկատմամբ կիրառվող ՖՀՄՍ-ի բացակայության դեպքում դատողությունների հիման վրա ինքնուրույն պետք է մշակի հաշվապահական հաշվառման այնպիսի քաղաքականություն, որ տեղեկատվությունը լինի՝
- ա) տեղին՝ օգտագործողների կողմից տնտեսական որոշումներ կայացնելու համար.
 - բ) արժանահավատ այն առումով, որ ֆինանսական հաշվետվությունները՝
 - բ1) ճշմարիտ ներկայացնեն Հիմնադրամի ֆինանսական վիճակը, ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը.
 - բ2) արտացոլեն գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների ոչ միայն իրավական ձևը, այլև դրանց տնտեսական բովանդակությունը.
 - բ3) չեզոք են, այսինքն՝ կանխակալությունից զերծ.
 - բ4) հաշվենկատ են.
 - բ5) ամբողջական են բոլոր էական դրսևորումներում:
- 2.1.3. Վերը նշված դատողություններն անելիս Հիմնադրամի ղեկավարությունը հաշվի է առնում հետևյալ հաջորդականությամբ ներկայացված աղբյուրները՝ նկատի առնելով դրանց կիրառման հնարավորությունը՝
- ա) Հիմնադրամի հաշվապահական հաշվառմանը և ֆինանսական հաշվետվությունների պատրաստմանը վերաբերող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված յուրահատուկ պահանջները,
 - բ) նման և կապակցված հարցերին առնչվող ՖՀՄՍ-ներում ներկայացված պահանջները.
 - գ) ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի սահմանումները, ճանաչման չափանիշները և չափման հիմունքները՝ ներկայացված «*Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքներում*»:
- 2.1.4. Վերոհիշյալ դատողություններն անելիս Հիմնադրամի ղեկավարությունը կարող է նաև հաշվի առնել ստանդարտներ սահմանող այլ մարմինների վերջին հրապա-

րակումները, որոնք հաշվապահական հաշվառման ստանդարտներ մշակելու համար օգտագործում են նմանատիպ հայեցակարգային հիմունքներ, ինչպես նաև կարող է հաշվի առնել հաշվապահական այլ գրականություն և ոլորտում ընդունված փորձն այնքանով, որքանով վերջիններս չեն հակասում 2.1.3-րդ կետում նշված աղբյուրներին:

2.2. Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ

Սկզբնական ճանաչումը և չափումը

- 2.2.1. Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը Հիմնադրամի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում պետք է ճանաչի այն և միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:
- 2.2.2. Սկզբնական ճանաչման պահին «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է իր իրական արժեքով, իսկ մնացած բոլոր ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները՝ իրական արժեքով՝ գումարած տվյալ ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանն ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները:

Ապաճանաչումը

- 2.2.3. Հիմնադրամն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն և միայն այն դեպքում, երբ՝
- ա) ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (լրանում է ուժի մեջ լինելու ժամկետը). կամ
 - բ) այն փոխանցում է ֆինանսական ակտիվը, և փոխանցումը ստորև շարադրվածին համապատասխան որակվում է որպես ապաճանաչման պայմանները բավարարող:
- 2.2.4. Հիմնադրամը փոխանցում է ֆինանսական ակտիվն այն և միայն այն դեպքում, երբ այն՝
- ա) փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման պայմանագրային իրավունքները. կամ
 - բ) պահպանում է ֆինանսական ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման պայմանագրային իրավունքները, սակայն ստանձնում է այդ դրամական միջոցների հոսքերը մեկ կամ ավելի ստացողների (վերջնական ստացողների) վճարելու պայմանագրային պարտականություն՝ ըստ համաձայնության, որը համապատասխանում է հետևյալ երեք պայմաններին.

- բ1) Հիմնադրամը պարտականություն չունի գումարներ վճարելու վերջնական ստացողներին, եթե այն չի հավաքագրում համարժեք գումարներ սկզբնական ակտիվից: Հիմնադրամի կողմից մայր գումարի և շուկայական տոկոսադրույքով հաշվեգրված տոկոսի ամբողջությամբ հետ ստանալու իրավունքով տրված կարճաժամկետ կանխավճարները չեն խախտում այս պայմանը.
- բ2) փոխանցման պայմանագրի պայմաններով՝ Հիմնադրամին արգելվում է վաճառել կամ գրավադրել սկզբնական ակտիվը, բացառությամբ վերջնական ստացողների մոտ գրավադրման՝ որպես դրամական միջոցների հոսքերը նրանց վճարելու պարտականության դիմաց ապահովում.
- բ3) Հիմնադրամը պարտականություն ունի վերջնական ստացողների անունից՝ առանց էական ուշացման փոխանցել իր կողմից հավաքված ցանկացած դրամական միջոցների հոսքեր: Ի լրումն՝ Հիմնադրամն այդպիսի դրամական միջոցների հոսքերը վերաներդնելու իրավունք չունի, բացառությամբ դրամական միջոցներում և դրանց համարժեքներում ներդրումների, որոնք կատարվում են վերջնահաշվարկի այն կարճ ժամանակահատվածի ընթացքում, որը ընկնում է հավաքման ամսաթվի և վերջնական ստացողներին պահանջվող փոխանցման ամսաթվի միջև, և երբ նման ներդրումներից վաստակած տոկոսները փոխանցվում են վերջնական ստացողներին:

2.2.5. Հիմնադրամն ապաճանաչում է փոխանցված ֆինանսական ակտիվը, եթե՝

- ա) փոխանցվել են նաև ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ
- բ) ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները ոչ փոխանցվել, ոչ էլ պահպանվել են, սակայն Հիմնադրամը չի պահպանել ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Փոխանցման ընթացքում առաջացած կամ պահպանված որևէ իրավունք և պարտականությունն ճանաչվում է առանձին որպես ակտիվ կամ պարտավորություն:

2.2.6. Եթե Հիմնադրամը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները, սակայն պահպանել է ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա այն շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը՝ դրանում իր շարունակվող ներգրավվածության չափով:

2.2.7. Ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) ապաճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն՝

երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում, կամ ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է:

- 2.2.8. Գոյություն ունեցող փոխառուի և փոխատուի միջև նշանակալիորեն տարբերվող պայմաններով պարտքային գործիքների փոխանակումը պետք է հաշվառվի որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նմանապես, գոյություն ունեցող ֆինանսական պարտավորության (ակտիվի) կամ դրա մի մասի պայմանների նշանակալի վերափոխումը (անկախ այն բանից, արդյոք այն վերագրելի է փոխառուի ֆինանսական դժվարություններին) պետք է հաշվառվի որպես սկզբնական ֆինանսական պարտավորության (ակտիվի) մարում և նոր ֆինանսական պարտավորության (ակտիվի) ճանաչում:
- 2.2.9. Մարված կամ այլ կողմի փոխանցված ֆինանսական պարտավորության կամ ակտիվի (կամ ֆինանսական պարտավորության կամ ակտիվի մի մասի) հաշվեկշռային արժեքի և վճարված կամ ստացված հատուցման (ներառյալ փոխանցված ցանկացած ոչ դրամական ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:

Հետագա չափումը

- 2.2.10. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները, տրամադրած և ստացած փոխառությունները, դեբիտորական և կրեդիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արժեզրկում

- 2.2.11. Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում Հիմնադրամը գնահատում է, թե արդյոք առկա է որևէ անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբն արժեզրկված է: Եթե գոյություն ունի որևէ նման վկայություն, ապա Հիմնադրամը պետք է որոշի արժեզրկումից կորստի գումարը:
- 2.2.12. Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի արժեզրկման անկողմնակալ վկայությունը ներառում է ակտիվի տիրապետողին հայտնի դարձած դիտարկելի տվյալները կորստի հետևյալ դեպքերի վերաբերյալ՝
- ա) թողարկողի կամ փոխառուի նշանակալի ֆինանսական դժվարությունները.
 - բ) պայմանագրի խախտումը, օրինակ՝ տոկոսների կամ հիմնական գումարի չվճարումը կամ վճարման ուշացումը.
 - գ) փոխառուի ֆինանսական դժվարությունների հետ կապված տնտեսական կամ իրավական պատճառներով, փոխատուի կողմից փոխառուին զիջումների տրամադրումը, որը փոխատուն այլապես չէր նախատեսի.
 - դ) փոխառուի հավանական սնանկացումը կամ այլ ֆինանսական վերակազմավորում.

- ե) ֆինանսական դժվարությունների հետևանքով այդ ֆինանսական ակտիվի համար գործող շուկայի վերացումը. կամ
- զ) դիտարկելի տվյալներ՝ այն մասին վկայող, որ ֆինանսական ակտիվների խմբի գծով, դրանց սկզբնական ճանաչումից հետո, առկա է գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի չափելի նվազում, թեև դեռևս հնարավոր չէ որոշել այդ նվազումը խմբի առանձին ֆինանսական ակտիվների գծով, ներառյալ՝
 - զ1) խմբում փոխառուների վճարումների կարգավիճակի բացասական փոփոխությունները (օրինակ՝ վճարումների ուշացումների թվի ավելացումը կամ վարկային քարտերով փոխառուների թվի ավելացումը, որոնք հասել են իրենց պարտքային սահմանաչափին և կատարում են նվազագույն ամսական վճարում). կամ
 - զ2) ազգային կամ տեղական տնտեսական պայմանները, որոնք կոռելիացիայի մեջ են խմբի ակտիվների գծով ձախողումների հետ (օրինակ՝ փոխառուների աշխարհագրական շրջանում գործազրկության մակարդակի աճը, համապատասխան շրջանում հիպոտեկային անշարժ գույքի գների նվազումը, նավթի գնի նվազումը նավթարտադրողներին տրամադրած փոխառության գծով ակտիվների դեպքում, կամ արդյունաբերության ճյուղի պայմանների բացասական փոփոխությունները, որոնք ազդում են խմբի փոխառուների վրա):

2.2.13. Գործող շուկայի վերանալն այն պատճառով, որ Հիմնադրամի ֆինանսական գործիքներն այլևս չեն շրջանառվում բաց շուկայում, դեռևս արժեզրկման վկայություն չէ: Հիմնադրամի պարտքային վարկանիշի իջեցումը, որպես այդպիսին, արժեզրկման վկայություն չէ՝ չնայած այն կարող է հանդիսանալ արժեզրկման վկայություն՝ դիտարկվելով այլ առկա տեղեկատվության հետ մեկտեղ: Ֆինանսական ակտիվի իրական արժեքի նվազումն իր սկզբնական արժեքից կամ ամորտիզացված արժեքից ցածր պարտադիր չէ, որ հանդիսանա արժեզրկման վկայություն (օրինակ՝ պարտքային գործիքում ներդրման իրական արժեքի նվազումը, որն անոխսկ տոկոսադրույքի աճի արդյունք է):

2.2.14. Արժեզրկման անկողմնակալ վկայության առկայության դեպքում արժեզրկումից կորստի գումարը չափվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն (բացառելով ապագա պարտքային վնասները, որոնք դեռևս տեղի չեն ունեցել)՝ զեղչված ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով (այսինքն՝ սկզբնական ճանաչման ժամանակ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքով): Սկզբնական արդյունավետ տոկոսադրույք չունեցող գործիքների դեպքում զեղչումն իրականացվում է համանման ֆինանսական ակտիվի համար ընթացիկ շուկայական հատույցադրույքով: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ նվազեցնելով ակտիվի հաշվեկշռային արժեքը՝ օգտագործելով կարգավորող հաշիվ:

- 2.2.15. Եթե փոխառության, դեբիտորական պարտքի կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրման պայմանները վերանայվում են բանակցությունների արդյունքում կամ մեկ այլ ձևով վերափոխվում են փոխառուի կամ թողարկողի ֆինանսական դժվարությունների պատճառով, ապա արժեզրկումը չափվում է՝ օգտագործելով մինչև պայմանների վերափոխումը սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը: Կարճաժամկետ դեբիտորական պարտքերի հետ կապված դրամական միջոցների հոսքերը չեն զեղչվում, եթե զեղչման ազդեցությունն էական չէ:
- 2.2.16. Փոփոխական տոկոսադրույքով փոխառության, դեբիտորական պարտքի կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրման արժեզրկումից կորստի չափման նպատակով որպես զեղչման դրույք օգտագործվում է պայմանագրի համաձայն որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքը:
- 2.2.17. Եթե ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի գծով առկա է դիտարկելի շուկայական գին, ապա այդ ակտիվի արժեզրկումից կորուստը կարող է չափվել այդ դիտարկելի շուկայական գնով որոշված իրական արժեքի հիման վրա:
- 2.2.18. Գրավով ապահովված ֆինանսական ակտիվի գծով արժեզրկումից կորուստը չափելու նպատակով հաշվի են առնվում այն դրամական միջոցների հոսքերը, որոնք կարող են առաջանալ գրավի առարկայի իրացումից՝ հանած գրավը ստանալու և վաճառելու ծախսումները՝ անկախ այն բանից, թե արդյոք հավանական է գրավի առարկայի բռնագանձումը:
- 2.2.19. Արժեզրկման հավաքական գնահատման նպատակով՝ ֆինանսական ակտիվները խմբավորվում են պարտքային ռիսկի համանման բնութագրերի հիման վրա, որոնք ցույց են տալիս փոխառուների կարողությունը վճարելու բոլոր վճարվելիք գումարները ըստ պայմանագրային պայմանների (օրինակ՝ պարտքային ռիսկի գնահատման կամ դասակարգման գործընթացի հիման վրա, որը հաշվի է առնում ակտիվի տեսակը, արդյունաբերության ճյուղը, աշխարհագրական տեղամասը, գրավի տեսակը, ժամկետանցության կարգավիճակը և այլ առնչվող գործոններ): Ընտրված բնութագրերը պետք է տեղին լինեն այդպիսի ակտիվների խմբերի գծով ապագա դրամական միջոցների հոսքերի գնահատման համար այն առումով, որ ցուցանշեն փոխառուների կարողությունը՝ վճարելու բոլոր վճարվելիք գումարները՝ ըստ պայմանագրային պայմանների: Այնուամենայնիվ, կորստի հավանականությունները և կորստին առնչվող այլ վիճակագրական ցուցանիշները խմբի մակարդակով տարբերվում են ստորև նշվածների միջև. (ա) այն ակտիվների, որոնց արժեզրկվածությունը առանձին գնահատվել է, և պարզվել է, որ արժեզրկված չեն և (բ) այն ակտիվների, որոնց արժեզրկվածությունը առանձին չի գնահատվել: Նման տարբերության արդյունքում կարող է պահանջվել արժեզրկման մեկ այլ գումար: Եթե Հիմնադրամը չունի համանման ռիսկային բնութագրերով ակտիվների խումբ, ապա այն լրացուցիչ գնահատում չի իրականացնում:

- 2.2.20. Խմբային հիմունքով ճանաչված արժեզրկումից կորուստները ներկայացնում են միջանկյալ քայլ, մինչև տեղի կունենա հավաքական հիմունքով գնահատվող ֆինանսական ակտիվների խմբի առանձին ակտիվների գծով արժեզրկումից կորուստների հնարավոր բացահայտումը: Հենց որ հասանելի է դառնում տեղեկատվություն, որով կոնկրետ որոշվում են խմբի առանձին արժեզրկված ակտիվների գծով կորուստները, այդ ակտիվները դուրս են բերվում խմբից:
- 2.2.21. Հավաքական հիմունքով արժեզրկված լինելու տեսանկյունից գնահատվող ֆինանսական ակտիվների խմբի ապագա դրամական միջոցների հոսքերը գնահատվում են խմբի ակտիվներին պարտքային ռիսկի բնութագրերով համանման ակտիվների գծով կորուստների առաջացման անցյալ փորձի հիման վրա: Անցյալ կորուստների վերաբերյալ սեփական փորձի բացակայության կամ անբավարարության դեպքում, օգտագործում են համանման Հիմնադրամների ֆինանսական ակտիվների համադրելի խմբերի գծով փորձը: Կորուստների անցյալ փորձը ճշգրտվում է ընթացիկ դիտարկելի տվյալների հիման վրա՝ արտացոլելու համար ընթացիկ այն պայմանների ազդեցությունը, որոնք չեն ազդել այն ժամանակահատվածի վրա, որի վրա հիմնված է կորուստների անցյալ փորձը, և բացառելու համար անցյալ ժամանակահատվածի այն պայմանները, որոնք ներկայումս գոյություն չունեն: Ապագա դրամական միջոցների հոսքերի փոփոխությունների գնահատականները արտացոլում են և ուղղվածությամբ հետևողական են առնչվող դիտարկելի տվյալների փոփոխություններին՝ ժամանակահատվածից ժամանակահատված (ինչպիսիք են գործազրկության մակարդակի, անշարժ գույքի գների, ապրանքների գների, վճարումների կարգավիճակի կամ այլ գործոնների փոփոխությունը, որոնք ցույց են տալիս խմբի կրած կորուստները և դրանց չափը): Ապագա դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդաբանությունը և ենթադրությունները պարբերաբար վերանայվում են՝ կորստի գնահատականների և կորստի փաստացի փորձի միջև որևէ տարբերությունները նվազեցնելու համար:
- 2.2.22. Օրինակ՝ Հիմնադրամը կարող է որոշել, հիմնվելով անցյալ փորձի վրա, որ վարկային քարտերի գծով վարկի չմարման հիմնական պատճառներից մեկը վարկառուի մահն է: Հիմնադրամը կարող է դիտարկել, որ մահացության տոկոսը տարեցտարի անփոփոխ է մնում: Այնուամենայնիվ, կազմակերպության վարկային քարտերի գծով վարկառուների խմբում որոշ վարկառուներ կարող են մահացած լինել տվյալ տարում, որը ցույց է տալիս, որ այդ վարկերի գծով արժեզրկումից կորուստ է առաջացել՝ նույնիսկ եթե տարվա վերջին Հիմնադրամը դեռևս տեղյակ չէ, թե վարկառուներից մասնավորապես ովքեր են մահացել: Ճիշտ կլիներ, որ արժեզրկումից կորուստ ճանաչվեր այդպիսի «տեղի ունեցած, բայց դեռ չգեկուցված» կորստի գծով: Մակայն ճիշտ չէր լինի արժեզրկումից կորուստ ճանաչել այն մահերի գծով, որոնք, ըստ սպասումների, տեղի կունենան ապագա ժամանակաշրջանում, քանի որ կորստի անհրաժեշտ դեպքը (վարկառուի մահը) դեռևս տեղի չի ունեցել:

2.2.23. Ապագա դրամական միջոցների հոսքերը գնահատելու ժամանակ անցյալ կորստի չափերը (մակարդակները) օգտագործելիս կարևոր է, որ կորստի անցյալ մակարդակների մասին տեղեկատվությունը կիրառվի այնպիսի խմբերի նկատմամբ, որոնք սահմանված են նույն ձևով, ինչ որ այն խմբերը, որոնց համար դիտարկվել են կորստի անցյալ մակարդակները: Հետևաբար, օգտագործվող մեթոդը պետք է թույլ տա, որ յուրաքանչյուր խումբ կապակցված լինի պարտքային ռիսկի համանման բնութագրեր ունեցող ակտիվների խմբերի անցյալ կորստի փորձի վերաբերյալ տեղեկատվության, ինչպես նաև այն դիտարկելի առնչվող տվյալների հետ, որոնք արտացոլում են ընթացիկ պայմանները:

2.3. Մասնակցության վկայագրեր

2.3.1. Հիմնադրամի կողմից վարկային պորտֆելի արժեթղթավորման համար թողարկված ոչ փաստաթղթային, անվանական, ոչ բաժնային և ձայնի իրավունք չստանալու հինգ դասի դրամային մասնակցության վկայագրերը դասակարգվում են որպես զուտ ակտիվների (սեփական կապիտալի) գործիք, քանի որ դրանք ստորադասված են մնացած բոլոր պարտավորություններից և իրավունք են տալիս զուտ ակտիվների համամասնական բաժնի նկատմամբ Հիմնադրամի լուծարման դեպքում (լուծարումից անմիջապես առաջ, և այն դեպքում, երբ ամբողջովին կմարվեն Հիմնադրամի կողմից թողարկված պարտատոմսերը):

2.4. Հասույթ

2.4.1. Հասույթը հաշվետու ժամանակաշրջանում Հիմնադրամի սովորական գործունեությունից առաջացող տնտեսական օգուտների համախառն ներհոսքն է, որը հանգեցնում է զուտ ակտիվների (սեփական կապիտալի) աճի, բացառությամբ զուտ ակտիվներ (սեփական կապիտալ) դասակարգված գործիքների տիրապետողների կողմից կատարված ներդրումների հետևանքով զուտ ակտիվների (սեփական կապիտալի): Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով:

2.4.2. Տոկոսային եկամուտը ճանաչվում (հաշվեգրում) է ժամանակային համամասնության հիմունքով՝ չմարված մայր գումարի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որն այն դրույքն է, որը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետի ընթացքում գնահատված ապագա դրամական ներհոսքերը ճշգրիտ կերպով զեղչում է մինչև այդ ակտիվի՝ սկզբնական ճանաչման պահի զուտ հաշվեկշռային արժեքը: Արդյունավետ տոկոսադրույքը որոշելիս հաշվի են առնվում վարկի տրամադրման և հետագա սպասարկման հետ կապված գանձվող բոլոր վճարները:

2.4.3. Երբ ֆինանսական ակտիվի կամ համանման ֆինանսական ակտիվների խմբի արժեքը նվազեցվել է արժեզրկումից կորստի արդյունքում, դրանից հետո տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ օգտագործելով այն տոկոսադրույքը, որը

կիրառվել է՝ արժեզրկման կորուստը չափելու նպատակով ապագա դրամական միջոցների հոսքերը գեղչելու համար:

2.5. Ծախսեր

2.5.1. Հիմնադրամը, կնքված պայմանագրերին և հաշվարկային փաստաթղթերին համապատասխան, ամսական պարբերականությամբ ճանաչում է հետևյալ շարունակական ծառայությունների գծով ծախսերը՝

- a) վարկերի սպասարկման վճար,
- b) պարտատոմսի սեփականատերերի գործակալի ծառայության վճար,
- c) արժեթղթերի սեփականատերերի ռեեստրավարման և արժեթղթերի հաշիվների պահպանման վճար:

2.5.2. Հիմնադրամը, կնքված պայմանագրերին և հաշվարկային փաստաթղթերին համապատասխան, եռամսյակային պարբերականությամբ ճանաչում է հետևյալ շարունակական ծառայությունների գծով ծախսերը՝

- a) կառավարման վճար,
- b) շուկա ստեղծողի վճար,
- c) պարտատոմսերի ցուցակման պահպանման վճար:

2.5.3. Երաշխավորման օգտագործման վճարները որպես ծախս ճանաչվում են կիսամյակային պարբերականությամբ:

2.5.4. Աուդիտորական ծառայությունների գծով ծախսը ճանաչվում է ծառայությունը մատուցելու պահին ներկայացված փաստաթղթի հիման վրա:

2.6. Շահութահարկ

2.6.1. Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար շահութահարկի գծով ընթացիկ հարկերը, դրանց չվճարված մասի չափով, ճանաչվում են որպես պարտավորություն: Ընթացիկ հարկը իրենից ներկայացնում է տվյալ ժամանակաշրջանի հարկվող շահույթի (վնասի) գծով վճարման (փոխհատուցման) ենթակա շահութահարկի գումար: Եթե ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար արդեն վճարված գումարը գերազանցում է այդ ժամանակաշրջանների համար վճարման ենթակա գումարը, ապա գերազանցող մասը ճանաչվում է որպես ակտիվ:

2.6.2. Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

- 2.6.3. Առաջիկա ժամանակաշրջաններ փոխանցված չօգտագործված հարկային վնասների և չօգտագործված հարկային զեղչերի համար ճանաչվում է հետաձգված հարկային ակտիվ այն չափով, որ չափով հավանական է, որ Հիմնադրամը ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել այդ չօգտագործված հարկային վնասները և չօգտագործված հարկային զեղչերը:
- 2.6.4. Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս և ներառվում են տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ հարկի այն մասի, որն առաջանում է գործարքից կամ իրադարձությունից, որը նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում ճանաչվում է շահույթից կամ վնասից դուրս՝ կա՛մ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կա՛մ ուղղակիորեն սեփական կապիտալում:
- 2.6.5. Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

2.7. Արտարժույթային գործարքներ և փոխարժեքային տարբերություններ

- 2.7.1. Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է, իսկ ցանկացած այլ արժույթ դիտարկվում է որպես արտարժույթ: Փոխանակման փոխարժեք. երկու արժույթների փոխանակման հարաբերակցությունն է: Փոխարժեքային տարբերությունը մեկ արժույթով միևնույն քանակը տարբեր փոխանակման փոխարժեքներով մեկ այլ արժույթով վերահաշվարկելու արդյունքում առաջացող տարբերությունն է:
- 2.7.2. Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ արտարժույթը և արտարժույթային ակտիվներն ու պարտավորություններն արտացոլվում են Հայաստանի Հանրապետության դրամով տվյալ օրվա (այսուհետ՝ գնահատման օր) դրությամբ համապատասխան կարգավորվող շուկայում տվյալ արտարժույթով վերջին գործարքի գնով, իսկ դրա բացակայության դեպքում՝ տվյալ արտարժույթի համար գնահատման օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած հաշվարկային փոխարժեքով: Արդյունքում առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ և ներկայացվում այլ օգուտների կամ կորուստների ներքո:

3. ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

3.1. Ընդհանուր դրույթներ

- 3.1.1. Հիմնադրամը հարկային հաշվառումը վարում է ՀՀ հարկային օրենսդրության, հարկային հարաբերություններ կարգավորող այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Այն դեպքերում, երբ հարկային օրենսդրությամբ և հարկային հարաբերություններ կարգավորող այլ իրավական ակտերով առանձնահատուկ մոտեցումներ սահմանված չեն, Հիմնադրամը առաջնորդվում է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, ՖՀՄՍ-ների և հաշվապահական հաշվառման վերաբերյալ այլ իրավական ակտերի պահանջներով:
- 3.1.2. Հիմնադրամը հարկային հաշվառումն իրականացնում է որպես միասնական հաշվապահական հաշվառման մի մաս՝ առավելապես հիմնվելով ֆինանսական հաշվառման համակարգի վրա: Այն դեպքերում, երբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով և դրան համապատասխան սույն քաղաքականությամբ սահմանված են այլ՝ ֆինանսական հաշվառման մեջ կիրառվողներից տարբերվող առանձնահատուկ մոտեցումներ, Հիմնադրամը հարկային հաշվառման նպատակով իրականացնում է դրանց զուգահեռաբար առանձին հաշվառում:

3.2. Ֆինանսական ծախսեր

- 3.2.1. Վարկերի և փոխառությունների հետ կապված տոկոսային և այլ ծախսերը նվազեցվում են համախառն եկամտից այն ժամանակաշրջանում, որին դրանք վերաբերում են՝ փոխառության (վարկային) պայմանագրին համապատասխան՝ անվանական տոկոսադրույքներով անվանական արժեքներից:
- 3.2.2. Վարկերի և փոխառությունների հետ կապված կոմիսիոն և այլ սպասարկման վճարները նվազեցվում են այն ժամանակաշրջանում, երբ դրանք դառնում են վճարման (գանձման) ենթակա՝ փոխառության (վարկային) պայմանագրին համապատասխան:

3.3. Վարկերի և դեբիտորական պարտքերի պահուստավորման և դուրս գրման գծով եկամուտներ և ծախսեր

- 3.3.1. Հարկվող շահույթը որոշելիս վարկերի և դեբիտորական պարտքերի գծով նվազեցումները (դուրս գրումից կամ պահուստավորումից), եկամուտները (դուրս գրվածի հետագա մարումից) հաշվի են առնվում ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի (1999թ. ապրիլի 23-ի թիվ 63 որոշում) և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի կողմից համատեղ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական

պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգին» համապատասխան:

3.4. Այլ եկամուտներ և ծախսեր

- 3.4.1. Այլ դեպքերում շահութահարկը որոշելիս հաշվառումն իրականացվում է ֆինանսական հաշվառման մեթոդաբանության ընտրված տարբերակներով, եթե «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով չեն նախատեսվում դրանց կիրառման առանձնահատկությունները:

4. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՎԱՐՈՒՄԸ

- 1.1.1. Հաշվապահական հաշվառման մասին օրենսդրության պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառման կազմակերպման պատասխանատվությունը կրում է Հիմնադրամի կառավարիչը:
- 1.1.2. Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը սահմանում է Հիմնադրամի տնօրենների խորհուրդը:
- 1.1.3. Հիմնադրամի հաշվապահական հաշվառման վարումն իրականացվում է Հիմնադրամի հետ համապատասխան քաղաքացիաիրավական պայմանագիր կնքած հաշվապահական ծառայություններ մատուցող՝ կառավարչի կողմից ընտրված մասնագիտացված կազմակերպության կողմից:
- 1.1.4. Հիմնադրամի հաշվապահական հաշվառումը վարվում է «Հայկական Ծրագրեր» ընկերության «ՀԾ-Բանկ 4.0» համակարգչային հաշվապահական ծրագրով:
- 1.1.5. Հիմնադրամն իր գույքի, պարտավորությունների և տնտեսական գործարքների, դրանց հետևանքների հաշվառում-գրանցումն իրականացնում է իր աշխատանքային հաշվային պլանով, որը հիմնվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից վարկային Հիմնադրամների համար սահմանված առանձնահատուկ հաշվային պլանի վրա (ավելացնելով լրացուցիչ հաշիվներ և փոփոխելով որոշ հաշիվների անուններ և նպատակային նշանակությունը՝ ելնելով իր հաշվառման, հաշվետվական և վերահսկողական առանձնահատկություններից):